յին զջուրն, այլ մինչ 'ի յերկիւղի՝ զի մի՛ չարիս ինչ գործեսցեն, այլ չ՚լինէր հնար՝ զի ընդ նոսա, սպրդեալ մտանէին 'ի ներքս արք անզգամք և սիկարեանք՝ և գործէին զչարիս, որպէս երբեմն 'ի պատճառս ջրոյ և այլոց սպանեալ էին զոմանս 'ի միաբանից։ Տեսեալ Գրիգորի Պատրիարքի թէ օր քան զօր բազմանան չարիք նոցին, և ոչ ուրք եղեւ հնար փախճան տալ դառնութեանց նոցին, գրեալ ծանոյց գիրսն 'ի Կոստանդինուպօլիս առ Յովհաննէս Պատրիարք, և նա ազդ արար 'ի Դուռն զանցս չարչարանաց միաբանից, և յաւել ասել 'ի գիրս իւր՝ եթէ ոչ սանձահարեսցին և պատուհասեսցին ապստամբքն այնոքիկ, անհնարին է միաբանից կալ մնալ 'ի նոյն վանս Ս. Փրկչի։ Եւ ապա խնդրեաց զի հրովարտակաւ Արքայի խափանեսցի ապստամբութիւն այլազգեաց Սիոնի, և եթէ ընդվզեալ անսաստեսցեն հրամանի Կայսեր՝ ըմբռնեալ մատնեսցեն 'ի բանտս եւ 'ի պատիժ պատուհասից։ Եւ 'ի զգացուցանել զայս Արքայի, գրեցաւ հրովարտակ ըստ խնդրոյ Յովհաննու Պատրիարքի առ Կուսակալն Դամասկոսի եւ առ դատաւորն Երուսաղէմի, սանձահարել զբռնութիւն այլազգեացն այնոցիկ. 'ի հասանել այսր հրամանի՝ թէպէտ եւ մեղմացան առ ժամն խստութիւնք նոցին, այլ ոչ եղեւ այն երկարատեւ, ՌՃՀ. (1727)։

ԳԼՈՒԽ Գ.

Ծաղաւարիկ. Բանակցութիւն Յունաց ընդ Հայոց 'ի վերայ այսր խնդրոյ եւ միաբանութիւն նոցին։ Նամակ Խրիսանթոս Պատրիարքին Յունաց։ Հրովարտակ Արքայի և սահման. Առանձին կատարել զտօն Պասեքին երկուց ազգաց։

ՅԱՒՈՒՐՍ Գրիգորի Պատրիարքի պատահեցաւ դարձեալ այլայլութիւն Զատկի՝ որ կոչի Ծաղաւարէն, որպէս բազմիցս պատահեալ էր յառաջագոյն. զի 'ի սմին ամի՝ որ էր Թուական Հայոց 1178 (1729), պասեքն Յունաց անկանէր 'ի 6 Ապրիլ ամսոյ, յորում աւուր պատահէր Հայոց